

Ալֆորվիլ, 15 Դեկտեմբեր, 2020

Յարգելի բարեկամ,

**ԱՅՔ ԷՖ ԷՄը փարիզեան շրջանի հայկական ձայնասփիւռն է:**

Ան կը սփռէ ամէն օր ժամը 6-էն 14 փարիզեան շրջանի մէջ, եւ 24 ժամ առցանց մեր [www.radio-aypfm.com](http://www.radio-aypfm.com) կայքի ճամբով: Արդէն Յունիս 2014-էն ի վեր, Մարսէլլի, Նիսի եւ Փարիզի մէջ օրական 24 ժամ կը սփռէ **Radio Numérique Terrestre-ի (RNT-DAB+)** ճամբով, որը համագործակցութեամբ է TNT-ին:

Հայ Դատը միշտ հանդիսացած է ձայնասփիւռի խմբագրական ուղղութեան հիմքը: Յաւալի այն իրադարձութիւնները որ ապրեցանք թուրք եւ ատրպէյճանական համագործակցութեամբ եւ զինուած վարձկաններու օժանդակութեամբ հրահրուած 27 Սեպտեմբերի պատերազմին հետեւանքով, նոր առիթ եղան վերահաստատելու մեր յանձնառութիւնը Արցախի ժողովուրդին եւ մեր հայրենանուէր մարտիկներուն կողքին: Անոնք արիաբար դիմադրեցին յարձակողական բանակին կողմէ անհամաչափօրէն օգտագործուած հրետանիին, անօդայնո թռչող սարքերուն, ֆոսֆորին եւ կասետային ռումբերուն: Մեր յանձնառութենէն թելադրուած, մենք առօրեայ հետեւողականութեամբ եւ մանրակրկիտ կերպով լրատուութիւն կատարեցինք հակամարտութեան ընթացքին վերաբերեալ, որուն առնչութեամբ մեր ունկընդիրները յայտնեցին իրենց գոհունակութիւնը:

Մեծամասնաբար 18-20 տարեկան հայ մարտիկներու այս սերունդը իր կեանքին գնով պաշտպանեց մեր սահմանները: Անոր կորուստը ծանր պիտի կշռէ մեր հայրենիքի ապագային ու զարգացման հոլովոյթին վրայ: Երախտապարտ ենք ու կը խոնարհուինք անոնց յիշատակին առջեւ:

**Յիշեցնենք, որ Այբ ԷՖ Էմը շահ չհետապնդող, ընկերակցական կանոնագրով ձայնասփիւռ մըն է:** Բոլոր ընկերակցութիւններու նման ան կը դիմագրաւէ բազմաթիւ ծախսեր՝ անձնակազմի ամսականներ ու հարկային ծախսեր, սարքեր (փոփոխութիւններ, նորի գնում, նորոգութիւններ), սփռում (հեռարձակման ծախսեր), հաղորդակցութիւն (կապ շրջաններու, Սփիւռքի եւ Հայաստանի հետ):

Լուրջ կառավարման որպէս արդիւնք ու շնորհիւ որոշ շահութաբեր ձեռնարկներու, կը յաջողէինք հոգալ այդ բոլոր ծախսերը: Սակայն այսօր, Covid-19 համաճարակին հետեւանքով պարտադրուած առողջապահական կանոններուն հետեւանքով, զրկուած ենք այդ լրացուցիչ եկամուտէն, մինչդեռ մեր աշխատանքը եւ ընթացիկ ծախսերը կը մնան անփոփոխ:

**Այդ իսկ պատճառով կը դիմենք մեր ունկընդիրներու առատաձեռնութեան**, որոնց համար յստակ է, որ **ոչ մէկ պարտաւորութիւն ունին բաժանորդագրուելու** մեր հաղորդումներուն, **որոնք անվճար տրամադրելի են իրենց:**

Ահա թէ ինչու անոնք ինքնաբերաբար իրենց նուիրատուութիւնները կ'ուղարկեն մեզի, հնարաւորութիւն ընձեռելով շարունակել մեր լրատուական, բայց նաեւ հայոց լեզուի ու մշակոյթի պահպանման նպատակով տարուող աշխատանքը:

**Կը յուսանք, որ այս առատաձեռնութիւնը կը շարունակուի, եւ որ դուք եւս կը միանաք այս քայլին:**

**Այո, մենք կը սպասենք ձեր օժանդակութեան:**

2021 տարեշրջանի շեմին, յուսալով, որ գալիք տարին նուազ ցաւալի ըլլայ մեր ժողովուրդին համար, Այբ ԷՖ Էմի տնօրէնութիւնս ու աշխատակազմը ձեզի ու ձեր հարազատներուն կը ներկայացնենք մեր լաւագոյն բարեմաղթութիւնները, եւ ձեզ կը հրաւիրենք միշտ ունկընդրելու փարիզեան շրջանի միակ հայկական ձայնասփիւռը՝ Այբ ԷՖ Էմը:

**Վասն ԱՅՔ ԷՖ ԷՄ-ի Վարչութեան  
եւ աշխատակիցներուն**

**Ձեր չէքերու հասցեագրման համար.**

AYP FM

41, rue des Ecoles

94140 Alfortville

**Cerfa ստացագիր մը պիտի ուղարկուի ձեզի (պետական հարկերու 66% զեղչ տրամադրող)**

(100 եւրօի պարագային ձեր իսկական ծախսը 34 եւրօ է)

**Հանրի Փափագեան**